

Ռուս-ուկրաինական պատերազմը լրջագույն անդրադարձներ է ունենում հայ-ադրբեջանական սահմանի վրա: Արցախի Հանրապետության բնակավայրերի դեմ սաստկանում են ահաբեկչական գործողությունները: Իսկ Հայաստանի Հանրապետության կողմից համարժեք և համաչափ արձագանք չկա: Հայաստանում, ըստ էության, սպասում են...Ռուս – ուկրաինական պատերազմի արդյունքներով կորոշվի՝ Ռուսաստան, թե՞ Թուրքիա...

Երեքշաբթի
15 մարտի 2022թ.
№ 5 (571)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

I ISSN 1829- 3468
2 1 0 0 5 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Դավիթ Բեկի հուշակոթողը
Կապանում՝ կառուցված
1978թ., քանդակագործ՝
Սարգիս Բաղդասարյան

300 տարի առաջ Սյունյաց աշխարհը, Դավիթ Բեկի գլխավորությամբ, ոտքի ելավ ընդդեմ թուրք զավթիչների

1727թ. այս օրերին թուրքական բազմահազարանոց զորքերը խայտառակ պարտություն կրեցին Հալիծորի բերդի մատույցներում և փախուստի դիմեցին:

Տարին չարենցյան է. մարտի 13-ին լրացավ մեծանուն գրողի 125-ամյակը

Մահվան տեսիլ

Եղիշե Չարենց



Որպես լավագույն թավջութակի ձգված մի լար
Դողում է սիրտս կարոտով մի ահարկու.
Կարոտներիս գագաթն է այն վերջին քնար. —
Մի պիտի պարան ու երկնուղեշ փայտեր երկու:
Որպես բախտիս մուգ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի —
Կախաղանի փայտերն ահա քաղաքի մեջ
Կանգնել են, սեզ, ու սպասում են կախվողի:
Կանգնել են, լուռ իրար կքած, փայտեր երկու,
Ու մեջտեղում դողում է, մեղկ ու երերուն,
Մի գորշ պարան, ինչպես տխուր այս օրերում
Անբոց մորմոքը նախդան իմ դրք հոգու
Իջել է շուրջը մի անհույս իրիկնաժամ,
Ու լռություն մի անսովեր, անդուռ, անդող.
Ինչպես մորմոքը օրերի, ինչպես դաժան
Մահվան թախիժը՝ իմ անլուր սիրտը բանտող
Ու խանութները, գորշ կքած, ու այն մարդիկ,
Որ հավաքվել են փայտերի շուրջը հիմա,
Մահվան բեկուն այդ քնարին այդքան մոտիկ —
Ինչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամա
Եվ արդյոք ով է երազել այդքան դաժան —
Ու լուսավոր առավոտները իմ հոգու
Ով դարձրեց — մի անկրակ իրիկնաժամ,

Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտեր երկու:
Գուցե այդ են են, որ սրտով իմ լուսնահար
Ոչ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
Ու ցանկացա, որ չօրհնե՞րգե ոչ մի քնար
Լուսապսակ, պայծառ գալիքը Նաիրի...

Երթամ հիմա Ու կարոտով անմխիթար,
Իմ երգիչի երազներով ու հրերով,
Անհրապույտ իմ օրերի երգով մթար
Ու նաիրյան իմ երազի վերջին սիրով,—
Երթամ մարող ու մարմող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ,—
Տամ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր...
Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,
Ուրիշ ոտքեր կախաղանին թող մոտ չգան.
Եվ թող տեսնեն իմ աչքերի մեջ կախվածի,
Իմ բոքը երկիր, լուսապսակ քո ապագան:
Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի
Նոքա տեսնեն պայծառ օրերը ապագա,—
Թող ոչ մի գոհ չպահանջվի ինձնից բացի,
Ոչ մի սովեր կախաղանին թող մոտ չգա...

**Ու կանգնած ենք ահա
ապագայի հանդեպ
Չարմանալի թեթև,
զարմանալի անդեմ՝
Մերկության պես
տկլոր ու անանցյալ...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ**

Ն. Փաշինյան. «Մեր հույսն է, որ դիվանագի- տությունը կկարո- ղանա լռեցնել թևափունջները»

Երևանը հույս ունի, որ ռուս-ուկրաինական բանակցություններն արդյունք կտան, և դիվանագիտությունը կկարողանա լռեցնել թևափունջները: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ի թղթակիցը՝ այդ մասին ՄԱԿ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության և ՀՀ դիվանագետի օրվա կապակցությամբ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած միջոցառման ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ շեշտելով, որ դիվանագիտությունը նվիրված այս միջոցառման ժամանակ չի կարող չխոսել Ուկրաինայում տեղի ունեցող իրադարձությունների մասին:

«Մենք սրտի կսկիծով ենք հետևում ծավալող իրադարձություններին, որոնք, հիմա արդեն ակնհայտ է, որ ունենալու են զլորալ հետևանքներ: Մեր հույսն է, որ այսօր նախատեսված ռուս-ուկրաինական բանակցությունները կկայանան և արդյունք կունենան, և դիվանագիտությունը կկարողանա լռեցնել թևափունջները», — իր ելույթն այս խոսքերով եզրափակեց Հայաստանի վարչապետը:

02.03.2022

Բաքուն Հայաս- տանին առաջարկ է ներկայացրել

Բաքուն պատրաստ է բանակցություններ վարել Երեանի հետ խաղաղության պայմանագիր կնքելու համար՝ պայմանով, որ Հայաստանն ընդունի հինգ հիմնարար սկզբունք, ասվում է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ:

Ադրբեջանն առաջարկում է հարաբերությունների կարգավորման հետևյալ սկզբունքները՝

- ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, միջազգային սահմանների անձեռնմխելիության և միմյանց քաղաքական անկախության փոխադարձ ճանաչում,
- պետությունների՝ միմյանց նկատմամբ տարածքային պահանջների բացակայության և ապագայում նման պահանջներ չներկայացնելու իրավական պարտավորության փոխադարձ հաստատում,
- ձեռնպահ մնալ միջպետական հարաբերություններում միմյանց անվտանգությանը սպառնալուց, քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության դեմ սպառնալիքներ և ուժ կիրառելուց, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնադրության նպատակներին անհամատեղելի այլ հանգամանքներից,
- պետական սահմանի սահմանազատում և սահմանագծում, դիվանագիտական հարաբերությունների հաստատում,
- տրանսպորտի և կապի բացում, այլ համապատասխան հաղորդակցությունների հաստատում և փոխադարձ հետաքրքրություններ կարգավորող այլ ոլորտներում համագործակցություն:

Վահագն Խաչատուրյանը երդմամբ ստանձնեց Հայաստանի Հանրապետության Նախագահի պաշտոնը



Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի հատուկ նիստում Վահագն Խաչատուրյանը երդմամբ ստանձնեց Հանրապետության Նախագահի պաշտոնը:

«Արմենարեն»-ի հաղորդմամբ՝ ՀՀ 5-րդ Նախագահ Վահագն Խաչատուրյանի երդման համար ԱԺ հատուկ նիստն անցկացվում է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Նիստը վարում է ԱԺ Նախագահի լիազորությունները կատարող ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը:

Ազգային ժողովի հատուկ նիստում Վահագն Խաչատուրյանը, ձեռքը դնելով Վեհամոր Ավետարանի և ՀՀ Սահմանադրության վրա, երդվեց՝ «Ստանձնելով Հանրապետության Նախագահի պաշտոնը՝ երդվում եմ. հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, իմ լիազորություններն իրականացնելու լինել անա-

չառ, առաջնորդվել միայն համապետական և համազգային շահերով և իմ ողջ ուժը ներդնել ազգային միասնության ամրապնդման գործում»:

Երդմանակալությունից հետո ինչեք Հայաստանի Հանրապետության օրհներգը, Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը հայրապետական օրհնության խոսք հղեց:

Արարողությանը մասնակցում էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Նախագահի լիազորությունները մինչև այս կատարող ԱԺ Նախագահ Ալեն Սիմոնյանը, Նախարարներ, այլ պաշտոնատար անձինք: Ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորները չէին մասնակցում հատուկ նիստին:

Նախագահի երդման արարողությանը հրավիրված էին Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, սփյուռքի և հայրենիքի պետական, հասարակական և մշակութային գործիչներ, բարձրաստիճան հոգևորականներ, արտախորհրդարանական ուժեր, գործարարներ, պաշտոնատար անձինք, ՀՀ-ների ներկայացուցիչներ:

Նախագահի պաշտոնում Խաչատուրյանի թեկնածությունն առաջադրել էր «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը: ՀՀ ազգային ժողովը Վահագն Խաչատուրյանին Հանրապետության Նախագահ էր ընտրել մարտի 3-ի նիստում: Վահագն Խաչատուրյանը Հանրապետության Նախագահ է ընտրվել 7 տարի ժամկետով:

13.03.2022թ.

Ռոբերտ Ղուկասյանը՝ Սյունիքի մարզպետ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. մարտի 3-ի որոշմամբ Սյունիքի մարզպետ է նշանակվել Ռոբերտ Ղուկասյանը:

Ծնվել է 1980թ. դեկտեմբերի 27-ին, Սումգայիթ քաղաքում: 2002-2007թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության ֆակուլտետում: 2002թ. Կալավանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարն էր: 2013-2019թթ. «Թայմ Լենդ» հիմնադրամի հիմնադիր տնօրենն էր: 2017-2018թթ. ճամբարակի համայնքի ղեկավարի օգնականն էր, ապա՝



խորհրդակցական: 2019-2022 թվականներին ՀՀ վարչապետի խորհրդականն էր: 1998-2000թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Ամուսնացած է, ունի երկու երեխա: //

Մելիքսեթ Պողոսյանը թողնում է Սյունիքի մարզպետի պաշտոնը...

Մարտի 2-ին Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը հրաժարականի դիմում է ներկայացրել, որը և բավարարվել է այսօր...

Չենթ ուզում խորանալ հարցի մեջ՝ իր կամքով ու սեփական որոշումով՝ էր հրաժարական տվել, թե՛ կառավարության առաջարկությամբ. դա խոսակցության առանձին թեմա կարող է լինել:

Այսօր այլ հանգամանքների վրա ենք ուշադրություն հրավիրում:

Մելիքսեթ Պողոսյանը Սյունիքի մարզպետի պաշտոնը ստանձնեց 2020թ. դեկտեմբերի 9-ին:

Հիշենք այդ օրերին հանրապետությունում և հատկապես Սյունիքում ու մեր երկրամասի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական ու բարոյաինոգեբանական ծանրագույն վիճակը...

Խոստովանենք՝ շատ քչերը կարող էին համարձակվել և համաձայնվել տվյալ պահին ստանձնել Սյունիքի մարզպետի պաշտոնը:

Մելիքսեթ Պողոսյանը համաձայնվեց...

Համաձայնվեց՝ կշեռքի Նժարին դնելով իր փառահեղ կենսագրությունն ու բարոյական անողորմ Նկարագիրը:

Համաձայնվեց՝ հստակ գիտակցելով, որ տարբեր կողմերից իր դեմ վարկաբեկիչ արշավներ են լինելու, հայիդյանքների և պի-



տակների տարափ:

Համաձայնվեց՝ քաջատեղյակ լինելով, որ համայնքային, նույնիսկ տարածքային իշխանությունների որոշ պատասխանատուների (հայտնի տեղից) հանձնարարված է (ամեն գնով) բոլորտեղ Մելիքսեթ Պողոսյանի գործունեությունը...

Ստեղծված իրավիճակում Նա խնդիր ուներ աստիճանաբար հաղթահարել այդ կացությունը, ինչի համար աշխատում էր գիշեր ու ցերեկ, աշխատում էր՝ ուշադրություն չդարձնելով մայրաքաղաքային մի բանի լրատվամիջոցի գրեթե ամենօրյա գրոհներին: Աշխատում էր՝ ունենալով Նաև իր իսկ գլխավորած

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի խոսքը ՀՀ Նախագահի երդմանակալության արարողության առիթով

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության, մեծարգո Նախագահ Արցախի Հանրապետության, մեծարգո վարչապետ, մեծարգո Նախագահ Ազգային ժողովի և հարգելի ներկաներ,

Այսօր մասնակից ենք հայրենական կյանքի կարևոր իրադարձության՝ Հայաստանի Հանրապետության նորընտիր Նախագահի երդմանակալության արարողությանը, որի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ, պարոն Նախագահ, և մեր ողջ ժողովրդին:

Երեսուն տարի առաջ մեր ժողովուրդը հերոսական պայքարով վերակերտեց իր անկախ պետականությունը՝ անցնելով մաքառումների և փորձությունների դժվարին ուղիով: Այդ տարիների ընթացքում մեր պետականության կայացման ճանապարհին երկրի առաջնորդությունը հանձն առան չորս Նախագահներ: Այսօր Դուք եք ստանձնում այդ պատասխանատու պաշտոնը, որ խորհրդանշի և հայոց անկախ պետականության:

Ձեր պաշտոնակալությունը տեղի է ունենում դժվարին ժամանակահատվածում, երբ հայրենիքը վիրավոր է Արցախյան պատերազմի արեւմտյան կորուստներով, և հաղթահարված չեն պատերազմի առաջ բերած մարտահրավերները, երբ տակավին գերության մեջ են և անհայտ կորած մեր զավակները, և պարբերաբար շարունակվում են ոտնձգությունները հայրենյաց սահմանների նկատմամբ, երբ ներազգային կյանքում տիրող անհանդուրժողականության մթնոլորտը և ներհասարակական բևեռացվածությունը շարունակում են խռովել մեր ժողովրդի հոգին:

Ամենքս այսօր մտահոգ ենք մեր երկրի իրավիճակով, երբում է խաղաղությունը Հայաստանում ու Արցախում, ծառացած են արցախահայության իրավունքների պաշտպանության և հակամարտության խաղաղ ու արդար կարգավորման հարցերը, և ապագան անորոշություններ է պարունակում:

Մտահոգ ենք և աշխարհը փոթորկող տագնապներով ու հակամարտություններով, աշխարհաքաղաքական և տարածաշրջանային բարդ զարգացումներով: Ներկայիս ծանրագույն մարտահրավերների պայմաններում հրամայական են ներհասարակական հաշտության օրակարգի իրականացումը, ազգային միասնականության վերականգնումը, հայրենիքի ապագայի և ազգային նպատակների շուրջ համընդհանուր տեսլականի ձևավորումը, որով կարելի կլինի հաղթահարել առկա խնդիրները, զորացնել մեր պետականությունը, հետամուտ լինել անվտանգային հարցերի լուծմանը, համախմբել համազգային ողջ ներուժը՝ ի շահ հայրենիքի և ժողովրդի:

Ցավով ենք անդրադառնում, որ երկփեղկված է մեր ժողովուրդը ոչ միայն Հայաստանում, այլև սփյուռքում՝ պայմանավորված հայրենիքում տեղ գտնող մտահոգիչ զարգացումներով, ինքնության ճգնաժամով և ներքին խնդիրներով: Սփյուռքի համայնքների ու ավանդական կազմակերպությունների զորացումը նույնպես պետք է լինի հայրենի պետության առաջնահերթությունը:

Որպես պետության գլուխ՝ Հանրապետության Նախագահի իրավասության տիրույթում է հետամուտ լինել երկրում արդարության ու օրինականության գերակայությանը, համապետական և համազգային շահերի պաշտպանությանը, որով, պարոն Նախագահ, պիտի



Նպաստեք մեր ժողովրդի ու հայրենիքի վերքերի ամոքմանը, պետության առաջընթացին և ապահով գալիքի կերտմանը: Մաղթում ենք, որ Աստծո և ժողովրդի առջև կատարած Ձեր երդումը մշտապես ուժի և զորության, անմաքորդ նվիրումի աղբյուր լինի՝ արդյունավորելու պատասխանատու և դժվարին Ձեր առաքելությունը:

Հայոց Եկեղեցին, ինչպես բոլոր ժամանակներում իր կոչմանը և ծառայությանը հավատարիմ, այսօր ևս շարունակելու է հայրենի պետության հետ գործակցությունը Սահմանադրության ոգուն համահունչ՝ հանուն մեր անկախ պետականության և մեր ժողովրդի խաղաղ ու բարօր, համերաշխ ու միաբան կյանքի՝ միշտ ուսուցանելով առաքյալի հորդորը. «Նույն բանը խորհեցեք, նույն սերն ունեցեք ձեր մեջ, եղեք միաշունչ, միախորհուրդ» (Փիլիպ. 2.2):

Պատմության հուշույթներում ազգային մեր միաբանությունը և հայրենաշեն ձեռքբերումները խարսխվել են ամենատարբեր փորձությունների դիմակայած մեր Նվիրական արժեքների վրա: Մեր ազգային արժեհամակարգը այսօր էլ պետք է սրբությամբ պահպանվի, իբրև գրավական մեր ինքնության և գոյության, և դիտարկվի ամուր հիմք, մեր ժողովրդի զավակների կրթության ու դաստիարակության:

Հափազանց մեծ է այն գինը, որը մենք վճարել ենք անկախ պետականության վերականգնման ճանապարհին: Հայրապետական Մեր հորդորն ենք ուղղում համայն մեր ժողովրդին՝ ապրենք և առաջնորդվենք գիտակցությամբ, որ հայրենիքը Աստծո պարգևն է մեր ազգին, և յուրաքանչյուրս կոչված ենք ամեն հանձնառություն ստանձնելու, ջանք և եռանդ չխնայելու՝ հանուն մեր երկրի հզորության և պայծառության: Հավատով նորոգվենք և մեր կյանքը շաղախենք հայրենյաց անսակարկ սիրով և բարեպաշտ ընթացքով: Ինչպես սաղմոսերգուն է ատում, մեր աստվածահաճո արարումներով «մեծարենք Տիրոջը, բարձրացնենք Նրա անունը միասին» (Սաղմ. 33.4) և հույսով ու լավատեսությամբ՝ զորացած՝ գործառնել հանուն մեր լուսավոր գալիքի:

Աղոթում ենք առ Բարձրալին Աստված, որ անվտանգ ու արժանապատիվ կյանքի նոր հորիզոններ բացի մեր ժողովրդի առջև՝ խաղաղության մեջ պահելով աշխարհը համայն, Հայաստան ու Արցախ մեր հայրենիքը և համբերատարություն ու տոկոսություն մեզ գորացնելով հավատավոր մեր բոլոր զավակներին:

Թող Երկնավոր Տիրոջ շնորհը, սերն ու ողորմությունը լինեն ամենքիս և ողջ մարդկության հետ, այսօր և հավիտյանս. ամեն:

**ՄԱՅՐ ԱՌՈՒԻ ՏԵՐԿԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳ**

մարզպետարանի մի սովոր խմբավորման, իշխանության որոշ օղակների անթաքույց դիմադրությունը: Մի խոսքով՝ իրականության հետ առերեսվում էր մեն-մենակ...

Արցախյան առաջին և Ապրիլյան պատերազմների հերոս Մելիքսեթ Պողոսյանի պաշտոնավարման օրերում, ցավոք, մենք ունեցանք 2020 դեկտեմբերի 18, 2021թ. մայիսի 12 և նոյեմբերի 16, ունեցանք Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն մայրուղիների հայտնի հանգույցների անեքսիա...

Չենթ թաքցնում՝ այդ իրավիճակներում շատերը կոնկրետ քայլեր էին ակնկալում Մելիքսեթ Պողոսյանից, բայց... Միամտություն

կլինեք գործնական քայլեր սպասել Սյունիքի մարզպետից (անկախ հանգամանքից, թե ով է զբաղեցնում այդ պաշտոնը) այն պարագայում, երբ նման հարցերը վճռվում էին և վճռվեցին երեք երկրի ղեկավարների փոխհամաձայնությամբ...

Արտաքուստ խաղաղ ու հավասարակշռված Մելիքսեթ Պողոսյանը, սակայն, այդ ամբողջ ընթացքում հոգեբանական, մարդկային ծանր ապրումներ էր ունենում՝ տեսնելով, որ իր գործառնությունների շրջանակում չի կարողանում խոչընդոտել Սյունիքի անդամահատմանը, որը եղել և մնում է մեր բաց վերքը...

Երևի արժե առաջին անգամ բարձ-

Ռուս-ուկրաինական պատերազմի անդրադարձը Հայաստանում և Արցախում

ՄԴՅ Նախագահը վստահեցնում է՝ որևէ ապրանքի դեֆիցիտ չի լինի. պարենի գները, սակայն, թանկանում են

Արցախի պետական հանձնաժողովի նախագահ Գեղամ Գևորգյանը վստահեցնում է, որ Հայաստանում որևէ ապրանքի դեֆիցիտ չկա, անհասկանալի է համարում մեծ ծավալով ակտուոր անելու անհրաժեշտությունը, սակայն հավելում, որ պարենի գները թանկանում են ամբողջ աշխարհում, ձեթի գինը բարձրանալու է: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Գևորգյանն այս մասին ասաց լրագրողների հետ ճեպագրույցում:

«Հայաստանում չկա որևէ ապրանքի դեֆիցիտ: Տեղի է ունենում այն գործընթացը, ինչ որ տեղի էր ունեցել կորոնավիրուսի ժամանակ: Մարդիկ մեկ օրվա ընթացքում մեծ քանակի առևտուր են անում, ցանցերը և մատակարարները չեն հասցնում այդ մեկ օրվա կամ 2 օրվա ծավալը պահեստից տեղափոխել խանութներ: Ինչպես կորոնավիրուսի ժամանակ էինք խոսք տվել, որ չի լինելու որևէ խնդիր, հիմա էլ ենք ասում, որ չի լինելու: Ինձ համար առնվազն անհասկանալի է մեծ ծավալով առևտուր անելու անհրաժեշտությունը: Այդ ապրանքը մնալու է տանը, հետո փչանա: Եթե ունենայինք անհանգստություն, որ որևէ ապրանքի ծավալ չի բավականացնելու, մենք կսահմանափակեինք առևտուրն ու այլ մեխանիզմներ կկիրառեինք: Այս պահին նման խնդիր չկա», – ասաց Գևորգյանը:

Անդրադառնալով դիտարկմանը, որ ՌԴ-ն փակելու է ԵԱՏՄ երկրներ ցորենի, ալյուրի, ձեթի, շաքարի արտահանումը՝ նա ասաց, որ այսպես է՝ սահմանափակելու է, որ բնութագրվում ամեն ԵԱՏՄ երկրի՝ ըստ իր պահանջի տրամադրվի համապատասխան քանակի մթերք: «Մենք բնութաների ցանկը, համաձայն տվորական հաշվարկի, ամիսների կտրվածքով ներկայացրել ենք և որևէ խնդիր չկա», – վստահեցրեց ՄԴՅ Նախագահը:

Անդրադառնալով դիտարկմանը, որ շաքարավազի գինն անգամ 600 դրամի է հասել՝



Գևորգյանն ասաց, որ կարող է մի խանութում անգամ 700, 800 լիտր: ՄԴՅ-ն չի վերահսկում նման բաները, վերահսկում է միայն այն ապրանքները, որոնք ունեն եական ծավալ: «Եթե կգ-ով շաքարը լինի 700 դրամ, մենք կսկսենք: Մենք գիտենք, թե ամեն ապրանքի գինն ինչքան է: Եթե մի հատուկ տեսակի շաքարը կամ հատուկ փաթեթավորմամբ շաքարը կամ հատուկ խանութում շաքարը 700 դրամ է, դա չի նշանակում, որ երկրում շաքարի գինը 700 դրամ է», – ասաց նա:

Գևորգյանը հավելեց. «Այդ պարենի գները թանկանում են, ձեթը թանկանալու է, ամբողջ աշխարհում թանկանալու են: ՀՀ-ում, ի տարբերություն շատ այլ երկրների, շատ ավելի էժան է գինը: ՌԴ-ից շատ ավելի հարմար գնով է գալիս»:

ՄԴՅ Նախագահն ասաց նաև, որ փորձում են ավելի էժան ճանապարհներ գտնել տնտեսավարողների հետ, որպեսզի գնային շուկեր չլինեն: Հայաստանում դիզելային վառելիքի առնվազն 2 ամսվա պաշար կա գործող գնով: Կարող է որոշ տնտեսավարողներ չունենան: «Իսկ շաքարը, եթե նոր խմբաքանակ ձեռք բերվի կամ ճակնդեղը, որը բավականին թանկ է բորսայում, կարող է մի փոքր թանկացում տեղի ունենա, սակայն այս պահին դեռևս նման խնդիր չունենք», – ասաց Գևորգյանը:

13.03.2022

Ադրբեջանի սանձարձակության հետևանքով Արցախի բնակչությունը գրկված է զազամատակարարումից

Արցախում արդեն հինգերորդ օրն է, ինչ շուրջ 100,000 բնակիչ (ընդհանուր բնակչության 80 տոկոսը և զազիֆիկացված բնակչության 100 տոկոսը) ամբողջովին զրկված են զազամատակարարումից, ներառյալ՝ ջեռուցումից ու տաք ջրից: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին «Տելեգրամ»-ի իր ալիքում նշել է Արցախի Հանրապետության պետական նախարար Արտակ Բեգլարյանը՝ ընդգծելով, որ այդ զրկանքների պատճառն ադրբեջանական կողմի սանձարձակ պահվածքն է:

«Արցախում ձյուն է տեղում՝ իսկ ջերմաստիճանը 0 և միևնույն ցելսիուս է: Բնակչության մեծ մասը զրկված է զազամատակարարումից և այս զրկանքների պատճառն ադրբեջանական կողմի սանձարձակ պահվածքն է:



ջանական կողմի սանձարձակ պահվածքն է, որը թույլ չի տալիս ռուս խաղաղապահներին և մեր մասնագետներին մոտենալ Հայաստան:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանը, ՄԱԿ-ին և համապատասխան կառույցներին դիմելու մասին

Վերջին օրերին լարվածությունը Արցախի սահմանամերձ բնակավայրերում նոր թափ է ստացել, մասնավորապես Ադրբեջանը ինտենսիվ կրակոցներ է արձակել, ականատեսներ կիրառել Ասկերանի շրջանի Խրամորթ, Նախիջևանի և Փառուխ գյուղերի, Մարտունու շրջանի Խուշինակ, Կարմիր շուկա, Թաղավարդ բնակավայրերի ուղղությամբ:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության նման սադրիչ գործողությունները միտված են ինչպես Արցախի ժողովրդին ահաբեկելուն և մշտական տագնապի մեջ պահելուն, այնպես էլ ռուսական խաղաղապահ ուժերի առաքելության ու հեղինակության նսեմացմանը:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովը խստիվ դատապարտում է Արցախի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ և ահաբեկչական գործողությունները, Արցախի Հանրապետության բնակավայրերի թիրախավորումը, խաղաղ բնակչության նկատմամբ հոգեբանական, տեղեկատվական ճնշումները, Արցախը բնական գազով ապահովող միակ գազատարի վերանորոգման աշխատանքներին խոչընդոտելը:

Այսպիսով՝ պաշտոնական Բաքուն շարունակում է իր հայատյաց քաղաքականությամբ:

Հավարտված պատերազմի հերթական գոհը Սյունիքից՝ Հրաչ Մանասարյան

Մարտի 7-ին, ժամը 12:40-ի սահմաններում, Ադրբեջանի ՇՈՒ ստորաբաժանումները նշանառու կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արևմտյան հատվածում տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով հրազենային վիրավորում է ստացել ՀՀ ՇՈՒ երկու զինծառայող: Նրանցից մեկը, ՀՀ ՊՆ N զորամասի պայմանագրային զինծառայող, սերժանտ Հրաչ Արամի Մանասարյանը, հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիշտը և զորակցություն հայտնում զոհված զինծառայողի ընտանիքի



յունը, խարխլում տարածաշրջանում առկա փիրուն խաղաղությունն ու կայունությունը, որը մեկ անգամ ևս փաստում է, որ Ադրբեջանը պատրաստ չէ տարածաշրջանում հարստև խաղաղության հաստատմանը:

Արցախի խորհրդարանը հորդորում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությանը, ՄԱԿ-ին և Նրա համապատասխան կառույցներին՝ համարժեք գնահատականի արժանացնել Ադրբեջանի պահվածքը, ջանքեր գործադրել՝ սանձելու նման հանցավոր ոտնձգությունները:

Ստեղծված իրավիճակը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ Արցախի ժողովրդի՝ անվտանգ ապրելու, անկախ պետականություն ունենալու իրավունքի ճանաչումը հանդիսանում է միակ ճիշտ, այլընտրանք չունեցող և քաղաքակիրթ որոշումը:

**Բ. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ,
10 ՄԱՐՏԻ 2022 Թ.**



անդամներին, հարազատներին և ծառայակիցներին: Վիրավորում ստացած մյուս զինծառայողի կյանքին վտանգ չի սպառնում:

WWW.MIL.AM

նից եկող միակ խողովակաշարին ու վերանորոգել այն: Խողովակաշարը պայթել է ադրբեջանական կողմի վերահսկողության ներքո», – նշել է Արցախի պետական նախարարը:

Արտակ Բեգլարյանն ընդգծել է, որ դրան զուգահեռ շարունակվում են քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ կրակոցները մեծ ու փոքր տրամաչափի զենքերից, ինչպես նաև ադրբեջանական կողմը խոչընդոտում է գյուղատնտեսական աշխատանքներին:

ների կատարումը:

«Հետևությունը մեկն է. Ադրբեջանը ցանկանում է շարունակել իր հանցագործությունը մարդկության դեմ և հայաթափել Արցախը, սակայն մենք ամուր ենք կանգնած մեր հինավուրց հայրենիքում և ոչ մի զրկանք չի սասանելու մեր կամքը», – նշել է Արտակ Բեգլարյանը:

12.03.2022

Հրաձայնել, որ պաշտոնավարման ընթացքում (բազմաթիվ հանգամանքներ հաշվի առնելով) առնվազն երկու անգամ նա հրաժարականի դիմում է գրել, բայց խորհուրդ են տվել՝ առայժմ չներկայացնել...

Մինչև վերջ նրա ընդդիմախոսները մեղադրում էին՝ ինչու՞ համաձայնվեց գործող իշխանության հետ համագործակցել:

Այդ հարցին ինքն ի սկզբանե հստակ պատասխան ուներ, ինչը քանիցս արտահայտեց՝ «Ես հայրենիքի գինվոր եմ ու չեմ կարող 2020թ. նոյեմբերի 9-ից հետո ձեռքբերել ծայած նստել կամ ստանձնել կողքից հայեցողի դեր: Ես պիտի լինեի այնտեղ, որտեղ իմ կարիքը զգացվում էր, որտեղ կարող էի փոքր-ինչ նպաստ բերել Սյունիքին»:

Ի դեպ, Մելիքսեթ Պողոսյանի դեմ գրոհներն այնքան հետևողական էին ու նեղ, որ դրանց հեղինակները չէին ուզում տեսնել այն գործերը (շատ թե քիչ), որ նրա նախածնունդով իրականացվում էին մարզում՝ սահմանների պաշտպանության ամրակողումից մինչև հանրային համերաշխության ճաբ տված պատի հնարավոր վերականգնում:

Այսպիսով՝ Մելիքսեթ Պողոսյանը Սյունիքի պատմության ամենավճռորոշ փուլում գլխավորեց մեր երկրամասի տարածքային իշխանությունը:

Հիմա, խոստովանենք, մարզում համեմատաբար ներքին խաղաղ իրավիճակ է, թեև հայտնի հիմնականիները շարունակում են մնալ հայոց ազգային օրակարգում: Եվ ուրեմն, ինչպես տեսնում ենք, նրա ծառայությունից կարելի է հրաժարվել...

Բայց, բոլոր հակասություններով և իրադարձությամբ կարծիքներով հանդերձ, ուզում ենք շնորհակալություն հայտնել Մելիքսեթ Պողոսյանին՝ մեր երկրամասի պատմության դժվարագույն օրերին Սյունիքի տարածքային իշխանությունը գլխավորելու համար:

Ուզում ենք փաստել նաև՝ Մելիքսեթ Պողոսյանը Սյունյաց աշխարհի արժանավոր

զավակներից է և շարունակում է մնալ Արցախյան առաջին և Ապրիլյան պատերազմների հերոսը: Նա, Սյունիքի փոխմարզպետի կարգավիճակով, առաջնորդը եղավ մեր մարզի աշխարհագրի, երբ 2020թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական դաշինքը պատերազմ սանձադրեց Հայոց Արցախի և Հայաստանի Հանրապետության դեմ:

Եվ ուրեմն՝ հաջողություն մաղթենք Մելիքսեթ Պողոսյանին՝ վստահ լինելով՝ անհրաժեշտության դեպքում նա՝ իր ջոկատով, երիցս կհայտնվի մեր սրբազան հայրենիքի պաշտպանության առաջնագծում:

03.03.2022

Սյունիքի ազատագրումը



ՌՈԲԵՐՏ ԷԶԱՆՆՆԻ

18-րդ դարը Սյունիքի համար նախորդ հազարամյակի ավարտուն համապատկերն էր՝ իսլամավախության (իսլամաֆոբիայի) համատարած դրսևորումներով։ Օտարի կառավարման պայմաններում հայկականի մեջ անտես սպրդել ու արմատավորվում էին մահմեդականության այրակումները։ Եթե հանդուրժվում էր, որ, ասենք, մելիք-Դավիթը դավանափոխվի ու կոչվի «մեալիք-Բաղրի», ապա հույժ անսովոր էր, երբ լուսավորչական եպիսկոպոսն իրեն կոչում էր Զովհան Շաբաֆուլի, մեկ ուրիշը՝ Առաքել Սաղըխօղլի և այլն (տես՝ Սիսական, էջ 21)։

Անշուշտ, Դավիթ Բեկի պատմության երջանկահիշատակ հեղինակը՝ Ղուկաս վրդ. Սեբաստացին, սարսուռով է նկարագրել սյունեցիներին նախնիների վարմունքը Զալիծորի ճակատամարտից առաջ՝ օրհասական պաշտպանության շաբաթվա ընթացքում, երբ «յայնժամ ամենայն բնակիչք զաւառին առհասարակ խռովեցան սասանեցան, թողին լքին գ՛հաւիթ, եւ գնացին մտին ընդ լծովն Օսմանցոց» (Պատմութիւն դափանցոց, Ս. Դազար, 1978, էջ 167)։ Բայց պատմիչի ու մատենագրի վարպետությամբ է նկարագրել դավիթբեկյան անգուգական հաղթանակն ու օսմանցիների անողորմ կոտորածը. «զարհուրեալք և սասանեալք՝ ասէին այլ ցընկեր. որ ոք կամի զանձն իւր ապրեցուցանել՝ փախստեան ուշ դիցե՛» (էջ 170)։

Դավիթ Բեկի Զալիծորյան ճակատամարտը Սյունիքի պատմության դարաբոլ հռչակույթում մեծագույն հաղթությունն էր իր զգատագրական, ռազմավարական և ազգի հետագա վերակազմակերպման նշանակութուններով։

Ժամանակաշրջանին նայենք ընդհանուր պատմության ետնախորքի վրա։

18-րդ դարի սկզբներին Եվրոպայից Պարսկաստանի վրայով ձգվող տարանցիկ ուղին սկսել էր զինել Աֆրիկան շրջանցող ծովային ճանապարհին։ Պարսից երկիրը ճգնաժամ էր ապրում, և շահական արքունիքն իր դատարկվող զանձարանը լցնելու համար ծանրացնում էր հարկերը։ Փաստական իշխանությունը խաների ձեռքին էր, որոնք կեղեքում էին ժողովուրդին և միշտ չէ, որ հաշվի էին նստում շահիի հետ։ Վարչախմբի երևելի այս տեսակն այնքան հեղեղեղուն էր, որ իրադրության թելադրմամբ կարող էր երես թեթել շահից ու հպատակվել ասպատակող օսմանցի փաշային։

Պարսիկ ժողովրդի տառապանքներից ավելի տուժում էին պարսկատիրության մյուս ժողովուրդները՝ հայեր, վրացիներ, աֆղաններ, քրդեր և այլն։ Եվ ընդվզումը համատարած բնույթ էր կրում։ Զատկապես Խամսայի մելիքություններում՝ Ղարաբաղում, այն վերածել էր ապստամբության, որի դեմ անձեռնհաս էր կենտրոնական իշխանությունը։

Ռուսական պատվիրակ Ա. Վոլինսկին Պետրոս Մեծին ներկայացրած գեկուցագրում այսպես է գրել 1694 թ. գաի բարձրացած շահ Զուսեյնի մասին. «ոչ թե հպատակների գլխին է կանգնած, այլ հպատակ է հպատակների մոտ, և հազվադեպ կարելի է գտնել նման հիմարի։ ... Ամեն ինչ վստահել է իր փոխանորդին, որն ամեն տեսակ անասունից էլ հիմար է» (Ս. Սոլովյով, Ռուսիայի պատմ., գ .9, էջ 367, ռուսերեն)։

1722 թ. աֆղաններն ապստամբեցին,

գրոհեցին ու գրավեցին պարսից մայրաքաղաք Սպահանը, և Ղանդահարի Միր-Մահմուդ խանն իրեն շահ հայտարարեց։ Մինչև Արաքս հասան Ղադստանի լեռնաբնակներն ու ավարեցին զավառները (օլթաները)։

Պարսկաստանի քաղաքական խառնակությանն անտարբեր չէին կարող լինել ոչ արևմտաեվրոպական խոշոր տերությունները, ոչ էլ, առավել ևս, Թուրքիան ու Ռուսաստանը։ Արդեն 1722-ին Պետրոս Մեծը զորքերով հասել էր Դերբենդ, իբր, լեզգիներին պատժելու համար, որոնք Շամախիում թալանել էին ռուս վաճառականներին։ Բայց հաջորդ տարին ռուսական բանակն ամրացավ Կասպից ծովի ափին (Բաբու, Ռեշտ և այլն), այս անգամ՝ պարսկական գահն աֆղաններից պաշտպանելու պատրվակով։ Կազմալուծվող Պարսկաստանից բաժին ստանալու հավակնությունը «պարկում թաքցված մախաթ» էր։ 1723-ին թուրքերը գրավեցին Թիֆլիսը, այնուհետև՝ Երևանն ու Գանձակը։ Վրաստանի՝ մահմեդականությունն ընդունած Վախթանգ թագավորը մեկ տարի անց ընտանիքով ճողպրեց Աստրախան։ Թուրքերը տեղում էին Կասպից ծովին, սակայն Ղափանի ու Ղարաբաղի զինվորականությունը մարտնչում էր նրանց դեմ ու թույլ չտվեց՝ գրավել Փոքր ու Մեծ Ղափանը և առաջանալ դեպի Կասպիականի կողմերը։

Ուր որ է՝ Այրարկվկասում պիտի բախվեին Թուրքիան ու Ռուսաստանը։ Թուրքերը, լեզգիների առաջնորդ Դավութբեկին օգտագործելով, ջանում էին մի կախյալ խանություն կազմակերպել Կովկասում (ինչպես Դրիմինը), իսկ ռուսներն ակներև ցանկանում էին աստար լինել վրացիներին ու հայերին՝ թողափելու օտարի լուծը։ Որքան էլ Անգլիան ու Ֆրանսիան ձգտում էին ավելի սրել ռուս-թուրքական ֆակամարտությունը, Պետրոս Մեծը ձեռնաքահ մնաց Թուրքիայի հետ պատերազմելուց։ 1724 թ. հունիսի 12-ին Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիրը, որի ուժով օսմանցիները պետք է տիրեին Վրաստանին, ստորին Ղադստանին և հայոց Նախանգեռին՝ Ատրպատական, Նախիջևան, Երևան, Գանձակ, Ղարաբաղ և այլն, մինչև Շիրվանի մի մասը։ Ուրեմն, իզուր էին հայերի՝ Ռուսաստանից օգնություն սպասելու հույսերը։

Ռուսական արքունիքը մտադիր էր Փոքր ու Մեծ Ղափանը զաղթեցնել Կասպից ծովի ափերը, սակայն հայ բաղաբանական ուժերը համառորեն դիմակայեցին այդ քայլին, թեպետ հայրենաթողությունը, այնուհանդերձ, մեծ չափերի էր հասել։

Զայ ազատագրական շարժման գլուխ էր կանգնած Գանձասարի կաթողիկոս, քաղաքական գործիչ և մատենագիր Եսայի Զասան-Ջալալյանը։ Նա գորավիզ էր Իսրայել Օրիին և Պետրոս Մեծից օգնություն խնդրելու նպատակով նրա հետ 1711 թ. ճանապարհվել էր Ռուսաստան։ Օրիի վախճանից հետո նա է դեկավարել ազատագրական շարժումն ու պայքարը։ 1718 թ. Պետրոս ցարին հղած նամակում Եսայի կաթողիկոսը հայտնում էր, որ իր ստորադրյալների հետ կամենում է գտնվել ցարի հովանու ներքո, և հենց որ վերջինս իր զորքերով մտնելու լինի Այրարկվկասի սահմանները, պատրաստ է ծառայություններ մատուցելու (Զժ Պ, հ.4, էջ 14)։

1722 թ. նրա ստեղծած տասնազարանոց բանակն է վրացական զորքի հետ պարտության մատնել Ղադստանի լեռնականներին։

Զայոց ազատագրման խնդիրն արծարծվում էր գաղտնապահությամբ՝ իսլամավախության ճիրաններում։

1722 թ. շահ Զուսեյնի ավագ որդին վտարանդիության մեջ՝ Ատրպատականում, իրեն շահ հռչակեց՝ Թահմասպ 2-րդ։ Նա գլխավոր վտանգը համարում էր օսմանյան ներխուժումը, որին հակադարձելու համար խորհում էր օգտագործել նաև ապստամբած հայ զինվորության ուժերը։ Դեռ երկու ամիս առաջ էր նրա թագավոր հայրը գորահավաք հայտարարել։

Պարզված է, որ՝ «Դավիթ Բեկի 2000-անոց ջոկատի հավաքագրումը եղել է Քարթլիի թա-

գավոր Վախթանգ 6-րդի կողմից՝ շահ Զուսեյնի 1722 թ. հունիսի հրովարտակի համաձայն Վրաստանում կազմակերպված մեծ զորահավաքի միջոցին՝ 1722 թ. օգոստոս-սեպտեմբեր։ Այդ ժամանակ էլ Դավիթ Բեկը շարժվել է Զայաստան» (Ա .Այվազյան, ՊԲԶ, 1990, 3, էջ 85)։

Ըաֆֆին տեղեկագրել է, թե վրաց ծառայության մեջ գտնվող Դավիթ Բեկը 1722–ին Ղարաբաղ է եկել, հավաքագրել մինչև 60 հազ. զորք, մելիքներից զորապետներ կարգել։ Երբ Էրզրումի փաշան նրանից բացատրություն է պահանջել զորահավաքի վերաբերյալ, հանդուգն պատասխանել է, թե Պետրոս ցարի հրամանով է անում (Յ. 9, էջ 435)։ Այս տեղեկությունը չունի Դավիթ Բեկի պատմության նախնական աղբյուրը, բայց և չի հակասում Ըաֆֆուն։ Ղուկաս վարդապետն իր աշխատությունը խմբագրել է Ս.Ղազարի Մխիթարյան միաբանությունում, Դավիթ Բեկի իշխանության անկումից մոտ հինգ տարի հետո՝ Վենետիկում հանգրվանած դավիթբեկյան զորապետների հիշողությունների հիման վրա։ Պահպանվել են Ստեփանոս Կալերեցի իշխանի, Տեր-Ավետիս քահանայի պատումները, որոնք առավել հավաստի են՝ որպես ականատեսների և իրադարձությունների մասնակիցների գրառումներ։ Զալիծորի ճակատամարտը համառոտ նկարագրել է Տեր-Ավետիսը, առավել մանրամասն՝ համապատումի եղղինակ Ղուկաս վարդապետը։

Լինելով նաև աշխարհագետ, վարդապետը հարցումներով կազմել է Ղափան երկրի (հիմա՝ Սյունիքի) քարտեզը, որը վկայում է հուշագրողների՝ տարածաշրջանը վատ պատկերացնելու մասին։

Ըստ Ստեփանոսի՝ Ղափանի 50 տանուների անունից ինքը նամակ է տարել Մծխեթ՝ վրաց թագավորին ուղղված խնդիրքով, որ զորապետ Դավիթ Բեկին թույլ տա Ղափան գալ ու ղեկավարել ապստամբությունը։ «Զաճոյ թուեցաւ իշխանին հայցուածն»։ Եվ Դավիթ Բեկը, անշուշտ Ղարաբաղով, շարժվեց դեպի Ղափանա երկիր։

Առաջին առճակատումը տեղի է ունենում Նախիջևան գետի վրա, սակայն՝ հօգուտ մահմեդականների։ Նահանջում ու վերակազմակերպվում են Սիսիանում։

Դավիթ Բեկի գալստյան ավետիսն առնելով, նրան իրենց յուրայիններով ընդառաջ էին գնում մելիքներ ու այլ զորական այրեր բոլոր կողմերից, հպատակություն հայտնում, զորապետության աստիճան ու հանձնարարություններ ստանում։

Դավիթբեկյանները Եռաբլրի սարավանդում ջախջախում են թխաղեն (կարաչորի) կոչվող թուրք ցեղին, որը պարբերաբար ասպատակում էր շրջապատը։ Ապա հաստատվում են Հնիերում, որոշ ժամանակ անց Նույն Եռաբլուրում ջարդ տալիս առյուծազարմ (ջիվանշիր) կոչվող թուրքերին։ Պաշարում ու գրավում են տաթևացի հավատորուաց մեալիք Բաղրիի բերդը։ Ի վերջո Դավիթ Բեկը զորական է ընտրում Փոքր Ղափանի Զալիծորը, հաղթական մարտեր մղում Շավղուրում, Սիսիանի, Բարկուշատի, Գեւառուկ կողմերում, տիրում յոթնաբերդյան Ղափանին։

Այս հերոսական պայքարով հայ զինուժն ակամա հանդես էր գալիս որպես Թուրքիայի հետ առճակատող Պարսկաստանի դաշնակից, և դա չէր կարող չնկատել շահ Թահմասպը։ Զայտն է արթայական մի հրովարտակ, որով շահը հրամայում է զինուժի ընդհանուր հրամանատար (սիփահսալար) Մուհամադ-Ռիզա խանին՝ շտապ օգնության հասնել Դավիթ Բեկին, որը «իրադրության փոփոխությունների հետևանքով ծանր կացության մեջ է ընկել» (ՊԲԶ, 1964,2, էջ 267)։

Դավիթ Բեկի հաջողությունները զրգռեցին սուլթան Ահմեդին։ Նա Ղափանն օղակելու և անգիջում ճակատելու հրաման տվեց։ Ահա, թե ինչ է գրել Տեր-Ավետիսը. «յերեբտասներորդ աւուր քառասնորդաց պահոց եկին հասին ի վերայ Նորա Պէփր Փաշայն և արապ Ալի Փաշայն... և բանակեցան հանդէպ Զալիծորոյ»։

Դավաճանությունը համատարած էր։ Օսմանցիների կողմն էին անցնում ոչ միայն հավատուրաց երևելիներ (մեալիք-Բաղրի, մելիք-Մուսի, մելիք-Ֆրանգուլ, չար Գրիգոր և այլն), այլև՝ խավարի ու տգիտության մեջ խարխափող գյուղացիները։ Խամրող հայկականության ոգեկոչող, այնուհանդերձ, համառ ու անսասան էր։ Նա՝ տաղանդավոր զորավար և քաղաքական գործիչ Դավիթ Բե-

կը, անխնա պատժում էր երկնչողներին ու նվնվացողներին, ներքին վտանգավոր թշնամու՝ տեղական մահմեդականության հետ համակերպվողներին, և «տեսն Դաւիթ թէ Աստուած օգնական է իւր»։

Մեր հաշվարկով Զալիծորի շրջապատումն սկսել է 1727 թ. մարտի 9-ին, ճակատամարտը տեղի է ունեցել մարտի 16-ին՝ կիրակի։

Թշնամու թվաքանակն ըստ Տեր-Ավետիսի 60 հազ. էր, ըստ վարդապետի՝ 60-70 հազ.։ Ըաֆֆին գերազնահատում է այդ թվերը և իրատեսորեն ընդունում մոտ 20 հազար (հ.10, էջ 187)։

Զայոց մեջ խուճապն այնքան ահազանցած էր, որ երևելի զորապետ Տեր-Ավետիս (նաև՝ Տեր-Ավետիք) քահանան իր հուշագրության մեջ, կարծես, կորցրել է իրականության զգացումը. «յայնժամ ամենայն բնակիչք աշխարհի զատան անշատան ի Դաւիթ Պէկէն, եւ եղեն անձնատուրք Օսմանցոց, եւ մնաց միայն Դաւիթ տասնեւեօթն սպառազինօք ի Զալիծորոյ անապատն»։ Նրան հետևելով, իրավիճակն այսպես անհույս է նկարագրել նաև Ղուկաս վարդապետը։

Մեկ շաբաթ տևած համառ մարտերից հետո, աջ գետափի գյուղը դյուրությամբ գրավելով, թշնամին երեք կողմից մոտեցավ մենաստանի ամրոցին, որի կառուցապատումը Դավիթ Բեկն ավարտել էր չորս տարի առաջ՝ 1723-ի հոկտեմբերին։

Չինատեսակները հիմնականում, ըստ քահանայի, սուրն ու հրացանն էին, իսկ վարդապետը հավաստում է թնդանոթների ու մագցման ինչ–որ մեքենաների առկայությունը։ Մեքենա ասելով, թերևս, վարդապետը նկատի ուներ հսկա հավաքովի սանդուղքները, որ բանեցրեց օսմանյան բանակը՝ «ահագին մեծամեծ մեքենայս՝ ըստ կերպի մեծամեծ սանդղոց, թուով քսան և վեց, ընդ ինքեանց բարձեալ բերէին»։

Դժվար չէ կռահել, որ պաշարվածության վեց օրերի ընթացքում Դավիթ Բեկն իր սպա–յակույտի հետ ուսումնասիրում էր հակառակորդի ճամբարում տիրող իրավիճակն ու մարտավարության հնարավորությունները։ Օսմանցիների զորախմբերն ու կարծկանները Զալիծորի ռազմադաշտին էին մերձեցել հիմնականում երկու կողմից՝ Կապանա գետի ստորին ու միջին հոսանքների (Չավղուր, Զորրագետ, Ուղուրչայ) շրջանից և գետի վերևագավառից (Ողջանց)։ Ցայժմ բանուկ է նաև Մեղրի–Գրիան–Զալիծոր ճանապարհը, որը հարմար էր հեծելազորի տեղաշարժի համար։

Թշնամու զգոնությունը թուլացնելուն էր միտված վեցօրյա տարերային կռիվների շրջանը՝ Զալիծոր գյուղի հանձնումը, հեռաբաշվելն ու բերդում ամրանալը, անգամ՝ կանանց ու երեխաների, հոգևորականների ու ապաշխարող կոյսերի՝ տարհանումից հրաժարվելը։ Տարեգրող վարդապետն ու քահանան չեն հիշում օրհասի ժամին դրսի ուժերից օգնության խնդրելու, սուրհանդակ ուղարկելու կամ վիատությունից այլ գործողության դիմելու որևէ ձեռնարկում։

Նորակառույց ամրոցում բազմահազարանոց բանակին դիմակայելն ինքնին արտառոց երևույթ է, և Զալիծորի պաշտպանությունը պատերազմների պատմության մեջ ուրվագծվում է առանձնահատկություններով։

Զուշագրողների և պատմիչի տեղեկություններից երևում է, որ այդ պատմական իրողությունը Դավիթ Սյունեցու ռազմավարական տաղանդի, կազմակերպական հսկայածավալ նախապատրաստության ու քաղաքական հեռատեսության արգասիքն էր։

Ոսկեծղի վարդապետը խորությամբ է ընկալել զորավարի բնութագիրը. «Դաւիթ ազնուական էր, բարեպաշտ, արդարակրողվ, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրատր բանիւք եւ գործով, նախանձահողջ բարեաց ազգի եւ վրժխնդիր վնասակարաց Նորատեղեակ գրոց»։

1722 թվականի մի հիշատակարանում կարդում ենք. «այդ մի երկրէն Սիւնեաց Դաւիթ բեկ անուանեալ, զօրաշարժութիւն արարեալ իցէ վասն հալածելոյ նեղիչք և կշտամբիչք մեր, միտս ունենալով ազատագրելոյ արիւնածուժի զաշխարին Զայաստան» (ՊԲԶ, 1973,3, էջ 181)։

Յիրավի, արյունածուփ Զայաստան աշխարհն ազատագրելու վճռականությունը Դավիթ Բեկի պատմական առաքելությունն էր, որի հավակնությամբ դարերի հուլովույթում ոչ մի անհատականություն Սյունիքում այդպես աննահանջ չէր իջել պատմական ասպարեզ։ Ստրկամտության





հակված ռափկ զանգվածները, որոնց գիտակցության մեջ ամրակայված էր թրքության անհաղթելիության պատրանքը, նրա անձի ու գործերի մեջ տեսան ազգային ոգու շարժը, ըմբռնված հաղթությունների քաղցր պտուղը: Միտքը ելել էր Ազնավաթից... Որ օսմանցուն կարելի էր ծնկի բերել, պարտության մատնել նրա կանոնավոր բանակը, իրականություն էր:

Չորապետի, հոգևորականի ու մատենագրի շնորհները մեկտեղած Ավետիս քահանա: Սյունեցին դավիթբեկյան հաղթանակը համարում է Աստուծոց տրված. «Ահա այսպիսի մեծամեծք են գործել Աստուծոյ, ապրեցուցանել ի ձեռն սակաւուց՝ ի բազմութեն բիւրատր հեծելոց, զի յաղթութիւն պատերազմի ի ձեռն Աստուծոյ է»:

Չորավարի մարտավարական փայլուն հնարանքը հանկարծական հարձակումն էր՝ մինչ թշնամին գլխի կընկներ վտանգը: Այսպես, ըստ պատմիչի, երբ Բաղրին խորհում էր պատերազմել Դավթի դեմ, զորավարը «ել վաղվաղակի ի վերայ Նորա ի պատերազմ»: Այս սկզբունքը կիրառվեց նաև Զալիծորի ճակատամարտում. «յանկարծակի գազանաբար յարձակեցան ի վերայ ամենայն բանակի Նոցա, յաջ և ահեակ կոտորելով դորդեցին զբոլոր բանակն Թուրքաց»: Երբ մարտի 16-ի երեկոյան կողմ բերդում պաշարվածները հուժկու գրոհ ձեռնարկեցին, թուրքն ու վարձկանը, անշուշտ, դրան չէին սպասում, որովհետև ի նշան «յանկարծակի հաղթանակի», զինակիրների թիկունքից մեծաքանակ թմբկահարներն ու դրոշակակիրները մոտեցել էին դիրքերին, թեպետ պարիսպների պահպանների կողմից թշնամական դիակները, ինչպես կարկուտից թափվող թզի վաղահատուկը, լցրել էին սանդուղքների հենատակերը:

Հուշագրության մեջ բնորոշ է, թե ինչ էր բղավում սարսափահար թուրք մունետիկը՝ դեղձ վաճ, քրիստոնյաները մեր վերջն են տալիս...

Դավիթբեկյան հերոսապատումի մեջ և՛ Ստեփանոս Կալերեցին (Ստ. Շահումյան), և՛ Տեր-Ավետիսը, և՛ Ղուկաս Սեբաստացին, իհարկե՝ ոչ գունեղ, նաև ցուցադրում են հայոց անմիաբանության դրսևորումը, որն, ինչ խոսք, պատուհաս էր մեծ զորավարի համար: Իր իսկ սահմանած կարգին հավատարիմ՝ նա խստագույն էր պատժում զորապետներին (մելիք-Փարսադանին ու Տեր-Ավետիսին բանտարկելը, Մխիթար բեկին ծեծել տալը, Պապ զորապետի գլխատումը Շիշկերտում, մելիք-Մուսուն վերացնելը և այլն): Արդ, հասկանալի է, որ փոքրաքանակ զորախմբով բազմահազարանոց բանակին հաղթելը Զալիծորում գլուխ եկավ հրամանատարի խստապահանջության, բանակային բարձր կարգապահության շնորհիվ:

Յետագայում շրջանառվեցին դավիթբեկյան մարտավարության այլ մանրամասներ,

որոնց մասին չէին տեղեկացրել վարդապետն ու քահանան: Մ. Զամչյանը, Մ. Մաղաթ-Թեոփիլյանը մի ուշագրավ դեպք են նկարագրել Դավթի ռազմական հնարամտության վերաբերյալ: Չորավարը, իմանալով, որ թշնամին առաջանում է արու ձիերով, նրա հեծելազորի վրա է արձակում մոտ 60 մատակ ու զամբիկ: Խառնաշփոթ է առաջանում, և հալիծորցիներն ավարի են ենթարկում հեծելազունը: Այլ ավանդազրույցներ են պահպանվել Կապանում, Սյունիքի այլ տեղերում:

Զալիծորի հաղթական ճակատամարտի լուրը ցնծությամբ ընդունվեց մայրաքաղաք Սպահանում, Ուկրաինայում, Լեհաստանում, Վանում, Աստրախանում, Ռուսաստանի ու Եվրոպայի ուրիշ տեղերում: Փաստեր կան, որ եվրոպաներում կազմավորված հայ կամավորների ջոկատներն Աստրախանով շտապում էին Դավթի Բեկին օգնության:

Մեր պատմության մեջ Զալիծորի ճակատամարտը դառնում է մի Նոր դարագլուխ՝ «Դավթի Բեկը թողեց պաշտպանողական պատերազմի միտքը» (Լեո, 5, էջ 482): Վրեժխնդիր լինելու, պատժելու և ավարառության մանրախնդրությունն ի դերն եղավ, և ուրվագծվեց դավիթբեկյան մեծ ծրագիրը, որը նախարդակելով էր նա Սյունիք մտել՝ կազմակերպել հայկական անկախ իշխանություն՝ պետականության հեռանկարով: Եվ զորավարը չէր վարանել՝ դաշնակից ընտրել պարսից շահին: Յենց 1727-ին նա ստացավ շահ Թահմասպի ընձաններն ու հրովարտակը, որով նա ճանաչվում էր Դավթան երկրի ընդհանուր հրամանատար, որին պետք է ենթարկվեն տեղական բոլոր մահմեդական իշխողները:

ՈՌԲԵՐՏ ԷԶԱՆԱՅԻ

Ծանոթագրություն

1. Դավթի Բեկի ծագումնաբանությունն ուսումնասիրությունների մի շարք է կազմում: 1786-ին լույս տեսավ Միք.Զամչյանի «Պատմութիւն հայոց»-ի 9 հատորը, որն առաջինն էր ազդարարում Դավթի Բեկի սխրագործությունը: Ըստ մեծն պատմաբանի՝ Դավթի Բեկն «էր ի ցեղէ սիւնեաց հայկազանց՝ այր հզօր եւ քաջաբազուկ» /էջ 785/: Այս փաստն արձանագրելով, Զամչյանը չէր նշել աղբյուրի հեղինակին: Յետագայում Ալիշանը պարզեց, որ Զամչյանը ձեռքի տակ է ունեցել Ղուկաս Սեբաստացու ձեռագիրը, որի վրայից հեղինակի անունն ինչ-ինչ պառճառներով ջնջված էր: 1871-ին Աբգ. Գյուլամիրյանցն Էջմիածնում հրատարակեց Ղ. Սեբաստացու գրչագիրը, սակայն՝ որոշ խմբագրումներով: Չորսորինակ, բնագիրը չէր հայտնում, թե Դավթի Բեկը սյունեցի է, բայց Գյուլամիրյանցը, թերևս իրեն հայտնի հավաստի այլ աղբյուրից, «երթալ յաշխարհն Սիւնեաց» -ը դարձրել է «երթալ յիւր հայրենի յաշխարհն Սիւնեաց» /էջ 149 և էջ 5/:

Ցարական արքունիքի սահմանած կարգի համաձայն, ազնվական ծագում /մելիք,

բեկ, աղալար, բեռիվաճ և այլն/ ունեցողները որոշակի արտոնություններ էին ստանում հարկերից ազատում, հողատիրության ժառանգում, ծառայություններ ցարական գրասենյակներում և այլն: Եվ շատերը սկսեցին փաստաթղթեր կեղծել՝ ցույց տալու համար իրենց բարձրաշխարհիկ ծագումը: Եվ Դավթի Բեկի պատմությունը գայթակղիչ փորձաբար էր: Այսպես, ոմն գնդապետ Ստ. Դավիդով 1797թ. Պավել կայսերը Գրիգորիալովի մագիստրատից կաշառքով վերցրած մի տեղեկագիր է ներկայացրել, ըստ որի, իբր, ինքը Դավթի Բեկի թոռն է և որ իր ազնվական պապը Գեղարքունիքի Ծմակ գյուղից է՝ Զախնազար բեկի որդին:

Մետրոպոլիտ Մովսիսյանի 1922թ. հրատարակած՝ Թիֆլիսեցի Ղուգանեսց Փարսադան- բեկի որդի Թադիի 1746 թվականին հիշատակարանում կարդում ենք. «Մեր միս եղբայր Աբուլմասեհն որ Կրաստան պարոնի հրամանաւն գնացին տեղն զօրաժողով առնելոյ, որոց գլխաւորն էր Ալիխանի որդի Դատլա-պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից և օսմանցոց բազում պատերազմս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին» /ՊԲՀ, 1987,1, էջ 89/: Այս հիշատակարանին հավատացողներ կան, սակայն ակնբեր է, որ այն Դավթի է վերաբերում, որովհետև Դավթի Բեկի զորապետների թվում Տեր-Ավետիսը Աբուլմասեհ անուն չի հիշատակում և, որ կարևորն է, Դավթի Բեկի մերձավորագույն զինակից Տեր-Ավետիս քահանան է հավաստում, որ Դավթից ոչ թե մարտում, այլ՝ իր տանն է վախճանվել:

Դանիել գրչի չափածո հիշատակարանից ոմանք «Եզրահանգել» են, թե Դավթի Բեկը Զաքարիա գավառից է.

Սակաւագիծ ճառս վիպական,

Վիպէ զարաս քաջին Դաւթեան,

Որ ի յԱբանդ տան Սիսական:

Վասն հաւատոյ քրիստոսական:

Յետագոտող Ա. Գ. Մադոյանը նկատել է, որ երրորդ տողով հեղինակը նշել է Դավթի գործելու և ոչ ծննդյան վայրը /ՊԲՀ, 1973,3 էջ 184/:

Հայտնի է նաև Րաֆֆու մի դիտարկումը. «Դավթի Բեկն իր գլխավոր զորաբաժանի հետ գնաց դեպի Դավանի նահանգը Զավնդուր կոչված տեղում, որը իշխանի հայրենիքն էր» /3. 10, էջ 180/:

Հանրահայտ է Գ. Շերմազանյանի ուղեգրությունը՝ հրապարակված «Կռունկ հայոց աշխարհին» հանդեսում 1863թ., որտեղ բերված է ութսունամյա ճգնավորի վերապատմածը Պապ զորապետի եղբորորդի Սրապիոնի պատմածից, ըստ որի՝ Դավթի Բեկը «Արցախի կողմերեն գաղթած երբեմն Կրաստուն ու երկար ժամանակ ծառայած յուրյանց արքունիքի միջին» անուն հանած զորագլուխ էր:

Սրապիոնի պատմածներին վերապահությամբ պետք է մոտենալ, որովհետև դրանք, իրական պատմական ժամանակից մոտ 120 տարի հետո շրջանառվելով, նաև

Զալիծորի բերդը՝ Դավթի Բեկի ազատագրական պայքարի գլխավոր ամրոցը և Սյունիքի հայկական իշխանության կենտրոնը

հակադավիթբեկյան դիտավորության հենք ունեն:

Լեոն հակված է այն մտքին, որ Դավթի Բեկի ծագումնաբանության բոլոր ավանդույթները կազմվել են գրավոր աղբյուրի ազդեցության տակ, և ինքնուրույնության դրոշմ է կրում դրանցից միայն մեկը. «Դավթի Բեկն էլ դավանցի էր, տեղային ամենանշանավոր տիրող տոհմերից» /3. 3, էջ 180/:

Դավթի Բեկի ծագումնաբանության անդրադարձել են Ե.Լալայանը, Ստ.Լիսիցյանը, Աշ. Աբրահամյանը և ուրիշներ:

Դավթի ընտանեկան վիճակի մասին մի ցնցող տեղեկություն ունեն Րաֆֆին, Ե. Լալայանը: Ըստ ավանդազրույցի՝ նրա հայր Աստվածատուրը սխալմունք է ունեցել՝ դավանափոխ եղել ու կոչվել Ալլահվերդի: Պատանի Դավիթը ծանր է տարել հոր վարմունքը և իր տարիքին հատուկ՝ ընդվզել է, տեղափոխվել ազգականների մոտ, ի վերջո հանգրվանել Կրաստանում ազգական Խոջա Սարգսի մոտ: Հարկավ, ընտանեկան այս ողբերգությունը խարանի պես ծանր է եղել Դավթի համար և դրանից ճնշվել է, ներանձնացել, գուցե սահմնվել: Մերձավոր շրջապատը, բնականաբար, զգուշանում էր նրա հետ կատարվածն անկարկելուց, և դա, անշուշտ, նրա կամեցողությամբ էր: Հայոց մեջ հոր սխալի համար տառապում են, սակայն նրան չեն պատժում: Բայց դույզն-ինչ պատկերացնելու է, որ դավանափոխներին գլխատելով, Դավթի զորավարն ի ցույց էր դնում հայրական սխալի անսերելիությունը: Արդ, մեկնելի է, թե ինչու զինակիցներ Ստեփանոս Կալերեցին, Տեր-Ավետիսը և պատմիչ Ղուկաս վարդապետը ոչինչ չեն հաղորդում նրա անձնական և ընտանեկան կյանքից, թեպետ ամենևին էլ ժլատ չեն մյուս երևելիների նկատմամբ: Ղուկաս վարդապետի համապատումի մեջ մեկ անգամ անկարկված է. «Եւ կոչեալ ԳԴաւիթ Մծիխթացի, ի Զայկազեանս տոհմէ, ետ նմա զիշխանութիւն երթալ յաշխարհն Սիւնյաց, որ այժմ կոչի Դաւիան»: Սա ուղղակի իմաստով չպետք է հասկանալ, թե, իբր, Դավթը մծիխթացի վրացահայ էր: Խոսքը մծիխթաբնակ լինելու մասին է: Նաև, հայրենիքում դառնացած լինելու պատճառով Դավթը կարող էր մաքրագործվելու տղայական հովերով իրեն մծիխթացի համարել:

Դավանյան ավանդությունն ասում է, թե մահից առաջ մեծ զորավարը պատգամ է թողել՝ իր չիրմաբարին ծաղիկ քանդակել ու Զալիծորում դնել երեսնիվայր, որ թուրքերը... ոսկորները չհանեն:

Դավթի Բեկի ծագումնաբանության վերաբերյալ մի պնդում ունի ԵՊՀ դոկտ. Ա. Սիմոնյանը՝ Դավթի Բեկը «ծնունդով Գորիսի Շիւտիայր գյուղից է» /Գիտելիք, 2004, 17 էջ 11/:

■



Անդրանիկ Հարությունյան. «Հայրենիքը պաշտպանելն այլընտրանք չունի»

Հարությունյան Անդրանիկ Համետի, ծնվել է 1968 թ. Մեղրու շրջանի Տաշտուն գյուղում: Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Սովորել է անասնաբուժական-անասնաբու-ծական ինստիտուտում՝ մասնագիտությամբ անասնաբույժ էր: Ուսանողական տարիներին զբաղվել է ծանրաքարի բարձրացմամբ, դարձել այդ մարզածնի ԽՍՀՄ չեմպիոն: Ծառայել է խորհրդային բանակում:

Հայրենիքը պաշտպանելն Անդրանիկի համար պատվի ու տղամարդկության չափա-նիշներից էր, ընկերները պատմում են, որ նա շատ խոսել, առավել ևս որևէ մեկի մասին կարծիք հայտնել չէր սիրում, բայց մարդու արժանիքների ընդգծման համար մի արտա-հայտություն ուներ, որը նշանակում էր, թե ինքն ամենաբարձր կարծիքն ունի այդ մար-դու մասին՝ «Ազգին պիտանի մարդ է»: 1994թ. մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին. վեց ընկերոջ հետ գերեվարվել է, բայց շնորհիվ շրջահայացության, մտավոր և ֆիզիկական ուժի, կարողացել է անվնաս ազատվել գերությունից և փրկել ընկերներին: 2007 թ. ամուսնացել է:

Երբ հարցնում են նրան ճանաչողներին, թե ինչպիսի՞ն էր Անդրանիկը, պատասխանը մեկն է՝ «Եվրոյի Անդոն (զբաղվում էր մետա-ղապատեղ (եվրո) պատուհանների արտադ-րությամբ) իսկական տղամարդ էր, հայ տղա-մարդ, ում հարգում էին թե՛ տանը, թե՛ դրսում: Ընտանիքն արժանապատիվ էր պահում, ըն-կերներին էլ հասնում էր՝ առանց բացառույթ-յան»:

Անդրանիկի կյանքում բանակը յուրահա-տուկ տեղ ուներ, իր որդին փոքր է, բայց ըն-կերների տղաները բանակում էին ծառայում, նրանց այցելելու, բոլոր զինվորներին մի փոք-րիկ նվեր տանելու առիթը բաց չէր թողնում:

2020 թ. Ադրբեջանը պատերազմ սկսեց. Անդրանիկն առանց հապաղելու անցավ թի-կունքի ապահովման գործին, իր միջոցներով կատարում էր գնումներ, ինքն էլ տեղ հասց-նում: Անդրանիկի ընկերներից երեքի որդի-ները զոհվել էին առաջնագծում. կինը, ով նույնպես զոհված ազատամարտիկի դուստր է, պատմում է, թե ամուսինն անճանաչելի էր դարձել՝ «Չէր կարողանում մի րոպե աչք փակել, ցավից, վրեժի ցատումից, ճակատա-գիրը փոխելու անկարողությունից, ընկերնե-րի երեխաներն իր ձեռքերին էին մեծացել, նրանց զոհվելու լուրն աննկարագրելի ծանր էր տանում, բարկանում էր, եթե մեկն ասում էր՝ մի գնա, ինքը զուսպ մարդ էր, բայց կարող էր նույնիսկ վիրավորել այդ արտահայտութ-յան համար: Երեխաներիցս ավագը, իհարկե, գիտի հայրիկի զոհվելու մասին, փոքրին չեմ ասել, կարոտում են, բայց ես իրենց բացառ-րել եմ, որ իրենք հերոսի զավակներ են, ես հայրտուգությունը պիտի լինի միակ զգացումը, որ երբեք պիտի ունենան: Իմ զավակները չեն չարանալու ճակատագրի հանդեպ, քա-նի որ միշտ կրկնելու եմ՝ ձեր հայրը հերոս է, նա ինքն է հայրենիքն իր կյանքից վեր դասել, դա նրա որոշումն էր, իսկ նրա որոշումները մեր տանն ընդունվել են առանց բնկարկման: Նրանց համար դժվար է լինելու, Անդրանիկը չտեսնված հայր էր, եթե երեխաներին ինչ-որ

բան էր պետք, նա առանց մի վայրկյան ու-շացնելու էր իրականացնում, կարող էր պատ-վիրատուին թողնել արտադրամասում, ինքը գալ, որ դատեր մոռացած իրը վայրկյան առաջ տեղ հասցնեի: Մենք չենք դադարելու զգալ նրա կարիքը, կարոտել ու հպարտանալ»:

Անդրանիկը Մեղրիի «Ոռոգման ջուր» ըն-կերության փոխտնօրենն էր, ընկերության տեխնիկայով կատարում էին ինժեներական աշխատանքներ, երբ դրությունը ծանրանում է, միանում է Դավիթ Մաթեոսյանի ջոկա-տին...

Հոկտեմբերի 22-ին թե՛ մարտեր են տեղի ունենում, մարտի դադարից հետո Անդրա-նիկը տուն է զանգահարում, ասում, թե մի փոքր ինժեներական աշխատանքներ կան, վերջացնելուց հետո վերադառնալու է, բայց թշնամու անօդաչուն հայտնաբերում է նրանց ջոկատը. նույն օրը նույն տեղում զոհվում են երեք մեղրեցի քաջեր՝ Մակար Բեգլարյանը, Դավիթ Մաթեոսյանը և Անդրանիկ Հարույն-յանը:

Անդրանիկ Հարությունյանը հուղարկա-վորվել է Տաշտունի գերեզմանատանը: //



Նարեկ Ելուդյան՝ երազանքը և նպատակը սպա դառնալն էր

Նարեկ Յուրիկի Ելուդյան, ծնվել է 1997 թ. ապրիլի 21-ին Սիսիանում: Տան երկու եղբայրներից կրտսերն էր: Ավարտելով Սի-սիանի թիվ 1 դպրոցը՝ ուսումը շարունակել է Սիսիանի պետական թղեջում: Գերազանց ավարտելով թղեջը՝ 2014 թ. ամռանը զո-րակոչվել է բանակ, ծառայում էր Մարտա-կետում: Որպես օրինակելի, կարգապահ ու քաջ զինվոր՝ պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» և «Հայոց բանակի գերազանցիկ» կրծքանշաններով, ինչպես նաև բազմաթիվ պատվոգրերով: Մի քանի ամիս էր մնացել զո-րացրվելուն, երբ սկսվեց 2016 թ. ապրիլյան պատերազմը: Ծառայակից ընկերների հետ միասին նա պատվով կատարեց իր առջև դրված խնդիրը, և, ինչպես հայրն է պատմում, հրաշքով էր փրկվել: Չորացրվելուց հետո ու-սումը շարունակել է Հայաստանի պետական ազդարային համալսարանի Սիսիանի մաս-նաճյուղում, եղել լավագույն ուսանողներից, այնուհետև ծառայության անցել Սիսիանի զորամասում՝ պայմանագրային զինծառայող:

Նարեկի մասին ասում են, թե բժախնդիր զինվորական էր, միշտ կոկիկ, միշտ մաքուր, զինվորական համազգեստը՝ միշտ հարդար-ված, մշտապես՝ գնեքը կոդիք, գնեքից ան-բաժան, իր բոլոր նկարներում՝ գնեքի հետ: Կյանքն այս տեսակ սիրելու, հայրենիքն այս կերպ ապրեցնելու համար էր, որ պայմա-նագրային Նարեկ Ելուդյանը ևս գնաց պա-տերազմ: Հոկտեմբերի 8-ին իջավ Սիսիանի դիրքերից, և տղաների հետ գնացին «այն-տեղ», ինչպես գնալուց առաջ հայացքով ցույց էր տվել հորը: Կռվել է Կարմիր Շուկայում, մասնակցել մարտական գործողությունների: Դեռ վերջին անգամ խոսել են հոկտեմբերի 14-ին: Չանգահարել էր ծնողներին, որ իրենց տեղը փոխում են, գուցե հետո կապ չլինի, չանհանգստանան, եթե չգնազահարի...

Գրեթե չորս ամիս տևած որոնումներից, փնտրություններից հետո 2021թ. հունվարի 25-ին նրա աճյունը գտան...

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին

Նարեկ Ելուդյանը հուղարկավորվել է Սի-սիանի զինվորական պանթեոնում հունվարի 27-ին: Նրա երազանքը և նպատակը սպա դառնալն էր, այնքան շատ էր սիրում գնեքն ու զինվորական համազգեստը... Սակայն, ինչ-պես անկատար մնաց այդ երազանքը, այն-պես էլ՝ ապրելու, սիրելու, սիրվելու իդձը... //



Արտուշ Արզումանյան. Նահատակված գործեսցի սպան

Արտուշ Արարատի Արզումանյան, ծնվել է 1979 թ. ապրիլի 17-ին: Սովորել է Գորիսի թիվ 5 միջնակարգ դպրոցում, կրթությունը շարունակել Գորիսի պետական թղեջում, հե-տո ուսանել Երևանի Մեսրոպ Մաշտոցի ան-վան համալսարանում: Ամուսնացած էր, ունի երեք որդի:

1997 թվականից մինչև 1999թ. ԴԲ-ում ժամկետային զինծառայող էր: 1999-ից մինչև 2020 թվական ծառայել է Կուբաթլիում, Մար-ջախում, Արա լեռում, Ջաբրայիլում: 2015թ. սովորել է Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ ստացել լեյտենանտի կո-չում: 2016 թ. եղել է N զորամասում՝ ԶԴԴԴ հրամանատար: Մասնակցել է 2016 թ. քա-ռօրյա պատերազմին, հաստատված զինա-դարձի ժամանակ իր ցանկությամբ գնացել է մասնակցելու մեր դիրքի տեղափոխմանը: Քառօրյա պատերազմից հետո նշանակվել է 3-րդ 39Գ 8-րդ վաշտի հրամանատար, 2017 թվին եղել է զորամասի պարենային ծառա-յության պետ, 2018-ին ստացել է ավագ լեյ-տենանտի կոչում և զբաղեցրել 1-ին 39Գ-ի սպառազինության գծով հրամանատարի տե-ղակալի պաշտոնը: 2019 թվականին ստացել է կապիտանի կոչում:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված պա-տերազմում թշնամու կողմից ոչնչացվել էին զուստանակի բոլոր մեքենաները. իր անձ-նական մեքենայով իրականացրել է զինամ-թերքի տեղափոխումը և զուգահեռաբար մասնակցել մարտական գործողություննե-րին: Մարտական գործողություններից մեկի ժամանակ ընկել է շրջափակման մեջ՝ մոտ 40 րոպե. մարտավարական հնարքների կիրա-ռությամբ դուրս է եկել շրջափակումից՝ փրկե-լով մի շարք զինծառայողների կյանք: Անձնա-կան մեքենայով իրականացրել է նաև դիրքի տեղափոխում, որպեսզի զինծառայողների մարմինները հանձնեն ընտանիքներին, իսկ վիրավորներին տեղափոխել է հոսպիտալ, որ-տեղ գտնվում էին կինն ու հայրը: Կինը 2014 թ. դեկտեմբերից աշխատել է զորամասի ըն-դունման բաժանմունքի բուժքույր, մասնակ-ցել է նաև Ապրիլյան քառօրյա պատերազմին՝ բուժօգնություն ցուցաբերելով վիրավոր զին-վորներին՝ արժանանալով մի շարք պատ-վոգրերի, իսկ այս պատերազմի ընթացքում շարունակել է իր մասնագիտական աջակ-ցությունը զինվորներին՝ գտնվելով ռմբակո-ծությունների տակ և չլքելով զորամասը մինչ ամուսնու հետ կատարված դեպքը:

Կապիտան Արզումանյանի իր ծառայութ-յան ընթացքում արժանացել է պատվոգրերի և անձնվեր ծառայության համար ստացել մի շարք մեդալներ՝ 2006 թվականին՝ «Անբա-սիր ծառայության» առաջին աստիճան, 2013 թվականին՝ «Անբասիր ծառայության» երկ-րորդ աստիճան, 2016 թվականին՝ «Դրաս-

տամատ Կանայան», 2017 թվականին՝ «Հա-յաստանի երկրապահ» հուշամեդալ, 2017 թվականին՝ «ՀՀ Չինված ուժեր-20 տարի» հորեյանական մեդալ, 2019 թվականին՝ «Ան-բասիր ծառայության» երրորդ աստիճան:

2020 թվականի պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 28-ի լույս 29-ի գիշերը, զինամ-թերք տեղափոխելիս կանգ է առնում, որպես-զի օգնի վիրավոր զինվորներին, և այդտեղ էլ կապիտան Արզումանյանն անմահանում է՝ փրկելով մի շարք զինվորների կյանք: //



Ալեն Բեգլարյան. պատանի երկրապահը

Ալեն Եղիշի Բեգլարյան, ծնվել է 2000 թ. փետրվարի 1-ին Կապան քաղաքում, տան կրտսեր որդին էր: Դեռ մանկուց իր մեջ ձևա-վորվել էր զինվոր դառնալու ցանկությունը և մեծ սեր ուներ դեպի զինվորական համազ-գեստը:

2006 թ. ընդունվում է Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցը, ապա ուսումը շարու-նակում Ձագեձորի միջնակարգ դպրոցում և ավարտում 2017թ.: Դպրոցում սովորելու տա-րիներին ընդգրկվում է Երկրապահ կամավո-րական միությանն ու երդվում, որ կլինի հայ-րենիքի նվիրյալ զինվոր: 2018 թ. հուլիսի 8-ին զորակոչվում է հայոց բանակ: Ծառայությունն անց է կացնում Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մատաղիսի զորամա-սում: Երկու տարի անց է կացրել սահմանի առաջնագծում: Հրամանատարության կող-մից պարգևատրվել է պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

Չորացրվելուց երկու ամիս էր անցել, երբ սկսվեց ադրբեջանաթուրքական ագրեսիան: Ալենն առանց վարանելու կամավորագրվեց հայրենիքի պաշտպանությանը, անպայման Արցախ էր ուղևորվել և պատվոգրերով, շնոր-հակալագրերով և «Քաջարի մարտիկ» շքան-շանով: Չորացրվել է 2020 թ. հուլիսի 8-ին:

ԷԵՐ ԴԱՏՈՒՍՏԵՑ
ՄԱՌԻ ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆԸ

ՊԵԿ քննչական վարչությունում քննվող քրեական գործի շրջանակում պետական բյուջե է վերականգնվել աննախադեպ՝ շուրջ 15 մլրդ ՀՀ դրամ գումար

Հարկային պարտավորությունը վճարվել է քրեական գործով մեղադրյալ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավարի անձնական միջոցներից

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության վարույթում ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածների հատկանիշներով քննվող բազմադրվագ քրեական գործի նախաքննության ընթացքում, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու առերևույթ հանցագործության դեպքի առթիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցված և տվյալ քրեական գործին միացված քրեական գործի քննությամբ պարզվել է, որ «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավար՝ գլխավոր տնօրեն հանդիսացող անձը, ղեկավարելով ընկերության կողմից կազմակերպված և իրականացված շահույթ հետապնդող ձեռնարկատիրական գործունեությունը, առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու նպատակով, օտարերկրյա պետություններում գրանցված և իր հետ փոխկապակցված ոչ ռեզիդենտ համարվող կազմակերպությունների միջոցով և վերջիններիս անուհից հատուկ մշակված և կիրառված սխեմայով, կատարել է «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ արտադրանքի՝ պղնձի խտանյութի շուկայականից էականորեն ցածր արժեքով մատակարարման գործարքներ, որի հետևանքով ընկերության հարկվող շահույթը պակաս է ցույց տրվել և արդյունքում պետական բյուջե չի վճարվել 15.017.640.469 ՀՀ դրամ հարկեր և վճարներ:

Այսպես, քրեական գործի նախաքննության ընթացքում իրականացված բազմաձև վալ քննչական և դատավարական գործողությունների, այդ թվում՝ հարցաքննությունների, խուզարկությունների, առգրավվումների, զննումների և այլ գործողությունների արդյունքում ամբողջությամբ բացահայտվել և հիմնավորվել է վերը նկարագրված հանցավոր սխեմայի իրական բովանդակությունն ու նպատակը: Մասնավորապես՝ քննությամբ հիմնավորվել է, որ «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ նախկին

գործադիր մարմնի ղեկավար հանդիսացող անձը, «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության՝ որպես պղնձի խտանյութի մատակարար և Արաբական Միացյալ Էմիրություններում հաշվառված, փաստացի որևէ տնտեսական գործունեություն չիրականացնող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների հետ ձևականորեն կնքված մատակարարման պայմանագրերի հիման վրա հաշվապահորեն ձևակերպվել է, թե իբր պղնձի խտանյութը դրա շուկայական գնից ակնհայտ ցածր արժեքով մատակարարվել է այդ կազմակերպություններին, այսինչ փաստացի պղնձի խտանյութը միջազգային շուկայական արժեքներով անմիջապես մատակարարվել է իրական գնորդ հանդիսացող և պղնձի խտանյութի վերամշակմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպություններին: Այնուհետև Արաբական Միացյալ Էմիրություններում հաշվառված կազմակերպությունների բանկային հաշիվներին իրական գնորդ հանդիսացող կազմակերպություններից ստանալով ձեռք բերված պղնձի խտանյութի իրական արժեքի վճարումները, այդ գումարների մի մասը փոխանցել է «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հաշիվներին, իսկ կիրառված սխեմայի արդյունքում գոյացած ֆինանսական միջոցների գերակշիռ մասը տնօրինել և ծախսել է այլ ուղղություններով: Նման եղանակով ընկերության ղեկավար անձի կողմից «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության իրական շահույթը տեղափոխվել է օտարերկրյա կազմակերպությունների ռեզիդենտության երկրներ՝ այդ կերպ գրկելով Հայաստանի Հանրապետության իրական արժեքներով մատակարարումներից գոյացած հարկվող շահույթը հարկելու հնարավորությունից:

Քրեական գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավար՝ գլխավոր տնօրենի մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցավոր արարք կատարելու՝ առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու համար:

Քրեական գործի նախաքննության ըն-



թացքում ձեռք բերված համապատասխան ելակետային տվյալների հիման վրա 2021 թվականի դեկտեմբերի 29-ին կազմվել է ստուգման ակտ և առաջադրվել լրացուցիչ գանձման ենթակա ընդհանուր 15.017.640.469 ՀՀ դրամ պարտավորություններ, որոնք 2022թ. ամբողջությամբ վճարվել են պետական բյուջե:

Հատկանշական է, որ 2017-2019թթ. ընկերության իրական հարկվող շահույթը պակաս ցույց տալու հետևանքով հարկերի և վճար-

ների տեսքով պետությանը պատճառված 15.017.640.469 ՀՀ դրամ գումարը՝ տույժերով և քրեական գործով հանդերձ, վերականգնվել է ոչ թե «Հանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ գործող ակտիվների հաշվին, այլ՝ սույն քրեական գործով մեղադրյալ ընկերության նախկին գործադիր մարմնի ղեկավարի կողմից՝ վերջինիս անձնական միջոցներից:

WWW.PETEKAMUTNER.AM

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «Էդ դո՞ւք եք խոսում Սյունիքի մասին, այ թալանչիներ. տարան, գլուխները կախ ընդունեցին իրենց մեղքը, ներում խնդրեցին եւ 15 մլրդ էլ վճարեցին պետական բյուջե»



Ազգային ժողովում, կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ իրավիճակը լարվեց:

Առաջադրված հարցին պատասխանեց Նիկոլ Փաշինյանը՝ Նշելով. «Կամ Սյունիքի մասին խոսողները. տարան, գլուխները կախ ընդունեցին իրենց մեղքը, ներում խնդրեցին եւ 15 մլրդ էլ վճարեցին պետական բյուջե: Էդ դո՞ւք եք խոսում Սյունիքի մասին, այ թալանչիներ»:

NEWS.AM, 02.03.2022



Եվրախորհրդարանն ընդունեց ԼՂ մշակութային ժառանգության ոչնչացումը դատապարտող բանաձևը

Եվրոպական խորհրդարանը ընդունեց «Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին» բանաձևը: «Արմենարթես»-ի հաղորդմամբ՝ բանաձևն ընդունվել է 635 կողմ, 2 դեմ և 42 ձեռնպահ ձայներով:

Ինչպես ֆեյսբուքի իր էջում գրել է ՀՀ Աժ

պատգամավոր Արման Եղոյանը, բանաձևը խստորեն դատապարտում է Ադրբեջանի շարունակական բաղաբախությունը՝ ջնջելու և ժխտելու հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում և դրա շուրջը՝ խախտելով միջազգային իրավունքը և Արդարադատության միջազգային դատա-

րանի վերջին որոշումը:

Այն փաստում է, որ վերջին երեսուն տարիների ընթացքում Ադրբեջանի կողմից իրականացվել է կրոնական և մշակութային ժառանգության անդառնալի ոչնչացում, հատկապես՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում, որտեղ ավերվել են 89 հայկական եկեղեցի, 20 000 գերեզմաններ և ավելի քան 5 000 տապանաքարեր,

Բանաձևն ընդգծում է, որ հայկական մշակութային ժառանգության հետքերի վերացումը Լեռնային Ղարաբաղում իրականացվում է ոչ միայն այն վնասելու կամ ավիրելու, բայց նաև պատմության կեղծման և այն որպես, այսպես կոչված, կոլկասյան-ալբանական ներկայացնելու միջոցով, և արձանագրում, որ 2022 թվականի փետրվարի 3-ին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Զարիմովը հայտարարել է «հայերի կողմից ալբանական կրոնական տաճարների վրա գրված հորինված հետքերը» վերացնելու համար պատասխանատու աշխատանքային խումբ ստեղծելու մասին:

Բանաձևն ընդունում է, որ հայկական մշակութային ժառանգության վերացումը հանդիսանում է հայատյացության, պատմական ռեհիզիոնիզմի և հայերի նկատմամբ ատելության համակարգային, պետական մակարդակով բաղաբախականության ավելի լայն օրինաչափության մի մասը, որը խրախուսվում է Ադրբեջանի իշխանությունների կողմից, ներառյալ հակահումանիզմը, բռնության փառաբանումն ու տարածքային պահանջները Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որոնք սպառնում են խաղաղությանն ու անվտանգությանը Հարավային Կովկասում:

Այն ընդգծում է պատմամշակութային ժառանգության պաշտպանությանը Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության կարգավորման և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերջնական սահմանման ավելի լայն իմաստով մոտենալու անհրաժեշտությունը, և այս համատեքստում կոչ է անում Ադրբեջանին հրաժարվել իր մաքսիմալիստական նպատակներից, ռազմատենչ մոտեցումներից և Հայաստանի նկատմամբ տարածքային պահանջներից ու բարեխղճորեն ներգրավվել ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ բանակցություններին:

Բանաձևը կոչ է անում Ադրբեջանին ամբողջությամբ կատարել Արդարադատության միջազգային դատարանի միջանկյալ կարգադրությունը, մասնավորապես՝ «ձեռնպահ մնալ հայոց լեզուն ճնշելուց, հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելուց կամ այլ կերպ պատմական հայկական մշակութային ներկայությունը վերացնելուց, կամ հայերի մուսուլմանային դրանցից օգտվելը արգելելուց» և «վերականգնել կամ վերադարձնել հայկական մշակութային և կրոնական որևէ շինություն և վայր, արտեֆակտ կամ առարկա», շեշտում է, որ մշակութային ժառանգության ոչնչացման կամ փոփոխման ցանկացած նոր դեպք պետք է անհապաղ ուշադրության արժանանա միջազգային հանրության կողմից:

Այն կոչ է անում Եվրահանձնաժողովին (ԵՄ գործադիր մարմին) օգտագործել բոլոր հասանելի լծակները Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման, փոփոխման, ինչպես նաև՝ վանդալիզմի դեպքերը կանխելու համար:

Լևոն Տեր-Պետրոսյան. «Հիսուն Զրիստոսի արձանի կանգնեցման գաղափարի մասին»

Քանի որ խնդիրը վերաբերում է բացառապես Հայ առաքելական եկեղեցու իրավասության ոլորտին, որին պետությունն անգամ միջամտելու իրավունք չունի, ապա, իմ խորին համոզմամբ, Հայոց եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհուրդը, ըստ արժանվույն գնահատելով հանդերձ

ազգային բարերար Գագիկ Ծառուկյանի անժխտելի երախտիքը եկեղեցաշինության գործում, այնուամենայնիվ, պետք է կտրակա-նապես մերժի այդ գաղափարը, որովհետեւ այն հակասում է Հայոց եկեղեցու 1700-ամյա պատմության սրբագործված ավանդույթին:

»



Լևոն Աղայանը՝ հաղթողի դափնիով

Փետրվար ամիսը և մարտի սկիզբը հագեցած էր մարզական միջազգային մրցումներով, որոնց մասնակցել են նաև Կապանի աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցի սաները:

Ինչպես «Սյունյաց երկրի» հայտնեց համայնքապետարանի աշխատակազմի սպորտի պատասխանատու Արշավ Սարգսյանը, փետրվարի 12-ին Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում անցկացվեց Բալկանյան երկրների աթլետիկայի առաջնությունը. մրցապայքարի մեջ մտան մինչև 20 տարեկան մարզիկները: Կապանցի մարզիկներից Գոռ Բեգլարյանը (մարզիչ՝ Արայոմ Պողոսյան) հեռացատկում 7 մ 36 սմ արդյունքով գրավեց 4-րդ տեղը:

Փետրվարի 19-ին և 20-ին Թբիլիսում կայացավ Վրաստանի ձմեռային առաջնությունը, որին Հայաստանը մասնակցեց ներկայացուցչական պատվիրակությամբ (17 մարզիկ): Կանանց եռացատկում Կապանի

աթլետիկայի մասնագիտացված մարզադպրոցի սանուհի Յանա Սարգսյանը (մարզիչ՝ Արսեն Պետրոսյան) դարձավ հաղթող՝ սահմանելով հանրապետության նոր ռեկորդ՝ 13 մետր 40 սմ:

Իսկ ամենաուրախալի լուրը ստացվեց Ստամբուլից: Մարտի 5-ին Բալկանյան երկրների մեծահասակների առաջնությունում Լևոն Աղայանը 16 մ 26 սմ արդյունքով բարձրացավ պատվո պատվանդանի ամենաբարձր աստիճանին:

2022 թվականի ձմեռային մրցաշրջանի ամենակարևոր ստուգատեսը կայանալու է Բելգրադում մարտի 18-20-ը, որտեղ կանցկացվի փակ մարզասրահների աշխարհի առաջնությունը: Հայաստանի Հանրապետությունը կներկայացնի Լևոն Աղայանը. կապանցի մարզիկին ցանկանաք հաջող մրցելույթ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կառավարությունը երկամսյա վարժական հավաքներ հայտարարեց

Կառավարությունը մարտի 10-ին որոշում կայացրեց հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ երկու ամիս ժամկետով՝ 2022 թվականի ապրիլի 15-ից մինչև հունիսի 15-ը:

Վարժական հավաքներին կներգրավվի մինչև 724 քաղաքացի, որոնցից 566-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 30-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 128-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ: Վարժական հավաքներին ներգրավվում են՝

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 72 պահեստազորային, որոնցից՝ 18 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 18-ից 24-ը ներառյալ, 9 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 25-ից մայիսի 4-ը ներառյալ, 18 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 15-ից 24-ը ներառյալ, 27 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի

սի 17-ից 26-ը ներառյալ.

2) հրթիռահրետանային մասնագիտություններով մինչև 469 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 10-ից 19-ը ներառյալ.

3) հետախուզական մասնագիտություններով մինչև 32 պահեստազորային, որոնցից՝ 26 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 18-ից 27-ը ներառյալ, 6 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 19-ից 28-ը ներառյալ.

4) ինժեներական մասնագիտություններով մինչև 31 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 30-ից հունիսի 8-ը ներառյալ.

5) տեխնիկական մասնագիտություններով մինչև 73 պահեստազորային, որոնցից՝ 42 պահեստազորային՝ 2022 թվականի մայիսի 10-ից 16-ը ներառյալ, 31 պահեստազորային՝ 2022 թվականի հունիսի 6-ից 15-ը ներառյալ.

6) թիկունքային մասնագիտություններով մինչև 47 պահեստազորային՝ 2022 թվականի ապրիլի 15-ից 24-ը ներառյալ:

10.03.2022



Մեկնարկեց կանանց միամսյակը

Կանանց միամսյակը (մարտի 8 - ապրիլի 7) մարզկենտրոնում մեկնարկեց Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոնում կանանց միջազգային տոնին նվիրված միջոցառմամբ: Կենտրոնի նախասրահում ցուցահանդես էր կազմակերպվել «Հայ ակնավոր կանայք» խորագրով: Ցուցադրանքում տարբեր ժամանակներում հայ իրականության մեջ ծանրակշիռ ավանդ ու մնայուն հետք թողած կանայք էին՝ բանաստեղծուհիներ, դերասանուհիներ, դիվանագետներ, գիտնականներ, նույնիսկ... բեռնախույզ: Այնուհետև սկսվեց հանդիսավոր նիստը և տոնական համերգը: Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը շնորհավորեց կանանց տոնն ու կատարեց պարզ-կատրուկություններ:

Կապանի կանքում նշանակալի ավանդ ունեցած և երկարամյա ու բարեխիղճ աշխատանքի համար Կապանի թիվ 6 Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրեն Բելլա Կոստանյանը, Կապանի մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոցի գեղարվեստական մարմնամարզության ավագ մարզիչ Օլգա Դունասկայան, Կապանի բժշկական կենտրոնի ինֆեկցիոն բաժանմունքի վարիչ Աիդա Բադալյանը, Կա-

պանի թիվ 3 երաժշտական դպրոցի դասատու Էլիզա Բադալյանը, Կապանի արվեստի մանկական դպրոցի տեսական բաժնի դասատու Կարինե Հովհաննիսյանը, Կապանի ակումբագրադարանային միավորման գրադարանավար Սաթիկ Ոսկանյանը, Կապանի ակումբագրադարանային միավորման ակումբավար Վարդուհի Թադևոսյանը Կապանի համայնքապետի կողմից պարգևատրվեցին պատվոգրով և շնորհակալագրով, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկված հուշադրամով:

Հանդիսավոր արարողությունից հետո Կապանի համայնքապետարանի մշակույթի կենտրոնի ստեղծագործական կազմը (համերգի զինավոր պատասխանատու և գեղարվեստական ղեկավար՝ Աստղիկ Գրիգորյան) հանդես եկավ տոնական համերգով: Ելույթ ունեցան մշակույթի կենտրոնի երգիչ-երգչուհիներ, երաժիշտներ, «Պարի աստղեր» շոու ստուդիան (գեղարվեստական ղեկավար՝ Էրիկ Քոչարյան), «Ձանգեզուր» ժողովրդական պարահումբը (գեղարվեստական ղեկավար՝ Վահագն Գասպարյան), «Էքսպերի-մենտալ» պարախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Ռուզաննա Խաչատրյան):

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ



Մարտի 8-ի առթիվ Կարեն Վարդանյանը 96 մլն դրամ է տրամադրել Սյունիքի մարզի բազմազավակ մայրերին

Սյունիքի մարզում հաշվառված է 4 և ավելի անչափահաս երեխա ունեցող նպաստառու 192 ընտանիք:

Բարերար Կարեն Վարդանյանը մարտի 8-ի առթիվ հերթական բարեգործական ծրագիրն իրականացրել է Սյունիքի մարզում և

բոլոր 192 ընտանիքներին հատկացրել 500 հազարական դրամ ֆինանսական աջակցություն:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 96 մլն դրամ:

ARMTIMES.COM, 07.03.2022

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

ՏՊԱԳՐՎՈՐԷ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շառումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թ՝ Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.03.2022թ.: